

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՊԱՇՏՈՆԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝	Ծանր տեխնիկայի մեխանիկ
ՎԵՐԱԴԱՍԸ՝	Տեխսպասարկման գծով մենեջեր
ԺԱՄԿԵՏԸ՝	Երկարաժամկետ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԱՅՐԸ՝	Ամուլսար, Վայոց ձոր
ԱՍՏԻՃԱՆԸ՝	

ՊԱՇՏՈՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ծանր տեխնիկայի մեխանիկից պահանջվում է իրականացնել գազի և դիզելի շարժիչների և շինարարական ծանր տեխնիկայի մեխանիկական վերանորոգման և տեխսպասարկման որոշակի հմտություններ պահանջող առաջադրանքներ: Ծանր տեխնիկայի մեխանիկը պետք է ունենա տեխնիկայի լուրջ և աննշան անսարքությունները վերացնելու, ինչպես նաև անհրաժեշտ բոլոր մեխանիկական մասերը վերանորոգելու և մոնտաժելու հմտություններ: Առաջադրանքները տրվում են բանավոր կամ գրավոր կերպով, սակայն ծանր տեխնիկայի մասնագետից կպահանջվի որոշել անհրաժեշտ նորոգման աշխատանքների բնույթն ու չափը:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

- Կառուցել, տեղադրել և վերանորոգել սարքավորումներն ու տեխնիկան
- Իրականացնել անսարքությունների ախտորոշում և որոշել նորոգման անհրաժեշտ գործողությունները
- Մշտապես բարելավել շահագործումը, նվազեցնել աշխատանքների իրականացման ժամկետը և ուղղորդել աշխատանքային գործընթացը
- Իրականացնել անվտանգության և տեխսպասարկման ամենօրյա ստուգումներ
- Վերանորոգել, բարելավել, սպասարկել դիզելային վառելիքով աշխատող մեքենաները, բեռնատարները, շինարարական ծանր սարքավորումները, գրեյդերները, բեռնաթափ մեքենաները և էքսկավատորները
- Վերանորոգել, բարելավել, սպասարկել վառելիքի լիցքավորման համակարգերը, արտանետման համակարգերը, սառեցնող, օդափոխման, յուղման, շարժիչի վերհասկման համակարգերը, շարժիչների ներքին վերանորոգման, բարելավման, տեղադրման աշխատանքները, շարժիչների և տեխնիկայի հարմարեցման աշխատանքները
- Վերանորոգել, բարելավել, սպասարկել շարժաբեր մեխանիզմը և գլխավոր փոխանցիչը, հիդրավլիկ փոխանցման տուփը, հզորության փոխանցման լիսեռը, թրթուրավոր մեքենայի կախոցները և կառավարման մեխանիզմը, արգելակման համակարգերը, անիվների վրա ամրացված տեխնիկայի կախոցները և կառավարման մեխանիզմը
- Գործնականում կիրառել աշխատանքային անվտանգության պահանջները
- Իրականացնել ծանր սարքավորումների աշխատանքի ստուգում և զննում՝ հնարավոր խափանումների և անսարքությունների բացահայտման նպատակով
- Նորոգել և հարմարեցնել հիդրավլիկ պոմպերը, անվտանգության փականները և ցանկացած այլ մեխանիկական մասեր
- Իրականացնել ծանր տեխնիկայի թերությունների ախտորոշում
- Իրականացնել խափանումների և անսարքությունների ախտորոշում՝ կիրառելով համակարգչային կամ փորձարկումների համար նախատեսված այլ սարքեր
- Զննել, նորոգել և հարմարեցնել բենզինով և դիզելային վառելիքով աշխատող միավորները
- Իրականացնել սարքավորումների եռակցման ընթացիկ աշխատանքներ
- Հետևել աշխատանքային անվտանգության քաղաքականություններին, կանոնակարգերին և

օրենսդրության պահանջներին

- Ցանկացած վտանգավոր պայմանների կամ պատահարների/վնասվածքների վերաբերյալ տեղեկացնել վերադասին՝ իրավիճակի արագ շտկման կամ դրա վերաբերյալ զեկուցման նպատակով
- Մշտապես ձգտել բարելավել տեխնիկայի շահագործումը, նվազեցնել աշխատանքների իրականացման ժամկետը և ուղորդել աշխատանքային գործընթացը, ինչպես նաև համագործակցել՝ անխափան և բարձր որակի սպասարկում տրամադրելու նպատակով
- Իրականացնել սարքավորումների մեխանիկական վերանորոգման աշխատանքներ սպասարկման կետում և ճանապարհներին, ըստ անհրաժեշտության
- Շահագործել տեխսպասարկման շարժական սարքերը
- Նոր և հավելյալ սարքերի տեղադրում
- Էլեկտրական և հիդրավլիկ խնդիրների ախտորոշում և վերացում
- Տեխնիկական առաջադրանքների և ժամանակացույցերի թերթիկների պատշաճ լրացում
- Վերանորոգել սառեցնող և յուղման համակարգերը
- Տեղադրել և հարմարեցնել տեխնիկայի շարժիչները
- Վերանորոգել մեխանիկական փոխանցման տուփերը, շարժաբեր մեխանիզմը և գլխավոր փոխանցիչը
- Վերանորոգել ճոպանային շարժաբերով աշխատանքային տեխնիկան, կարապիկները, կոմպրեսորները, պոմպերը, հոսանքի գեներատորները և այլն.
- Փորձարկել վերանորոգված սարքավորումները
- Մաքրել, յուղել և իրականացնել տեխսպասարկման այլ աշխատանքներ
- Սովորեցնել նոր աշխատողներին
- Տեխսպասարկման մատյաններն ու փաստաթղթերը պահել պատշաճ կերպով լրացված
- Քաջատեղյակ լինել տեխնոլոգիական և վերանորոգման տեխնիկաների փոփոխություններին
- Իրականացնել մեխանիկական վերանորոգման այլ աշխատանքներ, ըստ անհրաժեշտության
- Ուսումնասիրել նոր աշխատողների պաշտոնները

ԱՆՀՐԱԺԵՇ ՊԱՀԱՆՁՆԵՐ

- Ծանր տեխնիկայի/դիզելային տեխնիկայի մեխանիկի վկայական
- Ուսումնարանի վկայան/մասնագիտական կամ տեխնիկական կրթության առկայություն
- Համապատասխան որակավորման վկայականներ
- Առնվազն 10 տարվա աշխատանքային փորձ Ծանր տեխնիկայի մեխանիկի պաշտոնում
- Գործող վարորդական իրավունք
- Հիդրավլիկ և էլեկտրական սարքավորումների մեխանիկի հմտություններ, այդ թվում ախտորոշման և մոդելավորման ոլորտում
- Ընթացիկ տեխսպասարկման աշխատանքների փորձ
- Ճկունություն, շփվելու և աշխատանքային տարբեր միջավայրում արդյունավետ աշխատելու ունակություն
- Արտոնված կառույցում մասնավոր մեքենաների զննումներ իրականացնելու ունակություն
- Բանավոր և գրավոր շփվելու ունակություն
- Ծանրաբեռնված աշխատելու կարողություն
- Մանրուքների հանդեպ ուշադրություն
- Գույքի/պահեստամասերի կառավարման և գույքագրման համակարգերի վերաբերյալ գիտելիքներ
- Մարդկանց հետ շփման մեջ դիվանագիտական, տակտիկական և պրոֆեսիոնալ մոտեցման ցուցաբերում

ԴԻՄՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Հետաքրքրված բոլոր թեկնածուները կարող են իրենց ինքնակենսագրությունն (ռեզյումեն) ուղարկել հետևյալ հասցեով hr@lydianinternational.co.uk Նամակի Subject տողում անհրաժեշտ է նշել պաշտոնը: Միայն վերջին փուլ անցած (կարճ ցուցակում ընդգրկված) թեկնածուները կհրավիրվեն հարցազրույցի:

ԴԻՄՈՒՄ ՆԵՐԿԱՑԱՑՆԵԼՈՒ ՍԿԶԲՆԱԺԱՄԿԵՏ

14-ը փետրվարի, 2018թ.

ԴԻՄՈՒՄ ՆԵՐԿԱՑԱՑՆԵԼՈՒ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏ

28-ը փետրվարի, 2018թ.